ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցեն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ

43-ՐԴ ՏԱՐԻ

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Ամերիկայի բաժանորդները պէտք վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ, ԳԷՈՐԳ և ԼԵՒՈՆ ԽԱՏԻՍԵԱՆՆԵՐԸ ամուսինների հետ ցաւօք սրտի յայտնում են իրանց թանգագին մայր՝

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆԻ

մահվան մասին: Հոգեհանգիստը այսօր, երեքշաբթի, երեկ. ժամը 6-ին: Չորեքշաբթի, առ. ժ. 10½-ին, պատարագ Վանքի աւագ եկեղեցում: Թաղումը ժամը 12-ին նոյն եկեղեցու գաւթում: 2—1

ՆՈՒՆԷ ԱԼԻԲԷԳԵԱՆ որդիների հետ յայտնում է սրտի ցաւօք իր թանգագին մայր՝

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆԻ

մահվան մասին: Հոգեհանգիստը այսօր, երեքշաբթի, երեկոյեան ժ. 6-ին: Չորեքշաբթի, առ. ժամը 10½-ին պատարագ Վանքի աւագ եկեղեցում: Թաղումը ժ. 12-ին նոյն եկեղեցու գաւթում: 2—1

ՊՕՂՈՍ և ՆՈՒՆԷ ՂԱՄԲԱՐԵԱՆՆԵՐԸ սրտի ցաւօք յայտնում են առաջինի թանգագին քոյր՝

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆԻ

մահվան մասին: Հոգեհանգիստը այսօր, երեքշաբթի, երեկոյեան ժ. 6-ին: Չորեքշաբթի առ. ժ. 10½-ին, պատարագ Վանքի աւագ եկեղեցում: Թաղումը ժ. 12-ին նոյն եկեղեցու գաւթում: 2—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խորին կսկիծով յայտնում է Ընկերութեան պատւաւոր անդամ և Վարչութեան նախկին նախագահ՝

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, փետրվարի 9-ին, երեկ. ժ. 4-ին: Այսօր, երեքշաբթի, փետրվարի 11-ին, ցեր. ժ. 12-ին տեղի կունենայ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ընկերութեան կար ու ձևի դպրոցում (Паскевича 13), իսկ երեկոյեան ժ. 6-ին Վանքի աւագ եկեղեցում: Թաղումը չորեքշաբթի, նոյն եկեղեցու գաւթում: 1—1

Ս. Սարգսի և ս. Գէորգի եկ.-ծխ. հոգաբարձութիւնները անհուն վշտով յայտնում են ս. Սարգսի եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձութեան նախագահ՝

Նիկողայոս Յովհաննիսեան ՓԻՐՈՒՄԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 8-ին: Յուղարկաւորութիւնը այսօր, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից (Գուդովիչի փող. № 26) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

127 1—1

Ս. Սարգսի և ս. Գէորգի եկ.-ծխ. դպրոցների Մանկավարժական խումբը խորին վշտով յայտնում է ս. Սարգսի եկեղ. հոգաբարձութեան նախագահ՝

Նիկողայոս Յովհաննիսեան ՓԻՐՈՒՄԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 8-ին: Յուղարկաւորութիւնը իր բնակարանից (Գուդովիչի փող. № 26) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին այսօր առաւօտեան ժամը 10-ին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

128. 1—1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ

Նոր-Բայազէտ քաղաքում բացված

Նոր-Բայազէտի Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը

սկսել է իր գործողութիւնները 1914 թւի յունվարի 2-ից և կատարում է բանկային ամեն տեսակի օպերացիաներ:

Խորհրդի նախագահ՝
Խաչատուր Խ. Խաչատրեան

Խորհրդի անդամներ
Խաչատուր Բ. Բունիաթեան
Ալէքսանդր Խ. Բոչարեան
Վահան Ն. Արեշատեան
Մկրտիչ Թ. Աֆրիկեան
Ստեփան Թ. Բատիկեան

Վարչութեան նախագահ՝
Յակոբ Ս. Ալիխանեան
Անդամ-գանձապահ՝
Յովհաննէս Օ. Բուդումեան
Անդամ-գլխ. հաշւապահ՝
Կարապետ Բ. Ասլամազեան

(և.) առ. 108. 2—2

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
Չորեքշաբթի, փետրվարի 12-ին
կը կայանայ
ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Հետեւեալ ծրագրով՝

I. ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երգիծաբանական դասախօսութիւն պ. պ. Սալ-Մանի և Մելիտոնի. կը կարդայ դերասան Իս. Ալիխանեան: Դասախօսութեան ընթացքում կը խաղացվեն մի շարք պիէսներ, որոնք բնորոշում են հայ դրամատուրգիայի ընթացքը:

II. ՋՈՒՐԱՆՇԸ ԵԿԱՒ, ՇՓՈԹՄՈՒՆՔ ԸՆԿԱՒ
կոմ. 1 արար. թարգմ. Վ. Մանուէլեանի

III. ԿԱՆԱՆՑ ԴԻՐՋԱԿ
Վօդ. 1 արար. թարգմ. Թաւլանեանի

Մասնակցում են Դրամատիկ. Ընկ. խմբի դերասան-դերասանուհիները և Ժողովրդական Տան սիրողները:

Սկիզբը երեկ. ժամը 8-ին: ◆ Տեղերի գները 1 ռուբլուց մինչև 10 կոպ.

Կարգադրիչ՝ Գ. Երիցեան

առ. 130. 2—1

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՔՆՆԱԿԱՆ ԱՏԵԱՆՈՒՄ
(Тифлисъ, Кавказскій Комитетъ по дѣламъ Печати)

ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԹՈՅԼԱՏՐԱԾ ՊԻԷՍԱՆԵՐԻ

(Ամբողջացրած պաշտօնական հրատարակութիւն)
ԳԻՆԸ 40 ԿՈՊԷԿ

առ. (օ. մ.) 119. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, երեքշաբթի, փետրվարի 11-ին
Հայոց Դրամատիկ. Ընկ. խումբը
կը ներկայացնէ

I

Դիւթող հնչիւններ դր.-էտ. 1 գործ. հեղ. Գինդի, թարգմ. Ցակոբեանի:

II

ՀԱՄՐ ԿԻՆ հեղ. Ան. Ֆրանսի, թարգ. Գ. Երիցեանի:

III

ԴԻՎԵՐՏԻՍՄԵՆՏ

Սկիզբը երեկ. ժամը 8-ին:
Տոմսակները 1 ռուբլուց մինչև 30 կ.:
Մասնակցում է ամբողջ խումբը:
Ռէժիսսորներ՝ Արմէնեան և Սեւումեան
Երեկոյթին կը նուագեն՝
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԲԸ
ՍԱԶԱՆԴԱՐՆԵՐ

ՊԱՐԵՐ եւրոպական և ասիական

Հիւրերը՝ ըստ յանձարարութեան՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.:

Ռենտգենի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՈՏՕՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская 23. тел. 7—92.

(ա.ս.) առ. 977. 100—74

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. ԿԵՕՆՃԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):

Ընդունելութիւն՝
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը

Անկիւն Արաս-Արագվսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.

(Ե.Հ.Կ.) առ. 679. 74-61

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Էջմիածնից հեռագրում են, որ Թիւրքահայաստանի համար բարենորոգումների նախագիծը Բ. Դրան կողմից ստորագրվելուց յետոյ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ը ստանում է բազմաթիւ ուղերձներ ու ողջոյնի հեռագիրներ հայերից Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի և Ամերիկայի զանազան տեղերից:

—

Հայկական պատգամաւորութեան նախագահ Պօղոս Նուպար-փաշան անգլիական «Times»-ում շնորհակալութիւն է յայտնում մեծ պետութիւններին Ռուսաստանի մեծահոգի նախաձեռնութեանը յօգուտ հայկական բարենորոգումների աջակցելուն համար. անգլիացի քաղաքագէտները գոհունակութեամբ նկատում են, որ Գերմանիայի ճնշումը հայերի վրա չը հարկադրեց վերջիններին՝ ժխտել Ռուսաստանի բարեացակամ դերը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
8 և 9 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Այսօր Անիչկովի պալատի եկեղեցում տեղի ունեցաւ Իշխանուհի Իրինա Ալէքսանդրովնայի և Իշխան Իւսուպով կոմս Սումարոկով-Էլստոնի պսակադրութեան հանդէսը: Ներկայ էին Թագաւոր Կայսրը, Կայսրուհիներ Թագուհիներ Մարիա Ֆէօդորովնան և Ալէքսանդրա Ֆէօդորովնան, Նոցին Մեծութիւնների Օգոստափառ Դուստրները և Կայսերական Գերդաստանի միւս անդամները: Երեկոյեան նորապսակները մեկնեցին արտասահման:

Կայացաւ հանդէս զինւորա-կրթական հաստատութիւնների մանկավարժական թանգարանի 50-ամեայ յոբելեանի առիթով: Մաղթանքից յետոյ տեղի ունեցաւ շքեղ հանդէս, որի ժամանակ կարդացվեց Մեծ Իշխան Կօնստանտին Կօնստանտինովիչի բնակիչը? յանուն գեներալ Մակաշեվի, արտասանվեցին հանդիսաւոր ճառեր, ներկայացան 147 պատգամաւորութիւններ Պետերբուրգից և գաւառից: Ստացվել են բազմաթիւ ողջոյնի հեռագիրներ:

Մարինսկի թատրոնում կայացաւ յոբելեանական ներկայացում բալէտային արտիստ Լէգատի 25-ամեայ գործունէութեան առիթով: Ներկայացմանը ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան, Օգոստափառ Դուստրները, Կայսերական Գերդաստանի անդամներից շատերը: Արտիստը բաղդաւորվեց Կայսրի ողորմած խօսքերով և ստացաւ շատ ընծաներ ու ողջոյններ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Դումայական բիւջէտային մասնաժողովի նիստում ուղղված հարցերի առիթով բացատրութիւններ տուեց ֆինանսների մինիստրութեան նոր կառավարիչը:

Պետական Խորհրդի նիստում, որ կայացաւ Գոլուբեվի նախագահութեամբ, ոգելից ըմպելիքների վաճառման օրինագծի յօդուածային քննութիւնը աւարտելուց առաջ ցանկութիւն արտայայտվեց, որպէսզի կառավարութիւնը մօտիկ ապագայում օրէնսդրական հաստատութիւններին առաջարկէ՝ ուժեղացնելու ոգելից ըմպելիքների ապօրինի վաճառման վրա սահմանված վերահսկողութեան միջոցները, իսկ յետոյ որոշվեց, որ օրինագիծը գործադրվելու է հրատարակութիւնից երեք ամիս յետոյ, իսկ այն յօդուածը, որ արգելում է ոգելից ըմպելիքների վաճառումը բոլոր կառավարական հաստատութիւնների, թատրոնների, համերգների, կինեմատոգրաֆների, ամեն տեսակ ցուցահանդէսների, հասարակական այգիների և զբօսատեղիների բուֆէտներում, գործադրվելու է ներկայ օրէնքը հրատարակելուց հետեւեալ տարվայ յունվարի 1-ից:

Դումայի անդամ պ. խ. Ալեքսէենկօն նշանակվեց ֆինանսների կոմիտէտի անդամ:

Մամուլի օրինագիծը քննող դումայական մասնաժողովը ի միջի այլոց ընդունեց դիֆֆամացիայի վերաբերեալ 1039-րդ յօդուածը, որին կցվեց Պարչևսկիի ծանօթութիւնը, թէ վարկաբեկված անձանց վերաբերութեամբ թոյլատրվում է ոչ միայն գրաւոր, այլ և ամեն տեսակ ապացոյցներ, վերաբերեալ հաղորդված փաստերի ճշմարտութեան:

ԹԻՖԼԻՍ.—Անդրկովկասի երկաթուղու Կարսի գծի Ախտալա և Հաղպատ կայարանների միջև մի խումբ աւազակներ յարձակում գործեցին ճանապարհորդական գնացքի վրա, կողոպտեցին ճանապարհորդներին, սպանեցին գնդապետ Բոգոմոլովին վիրաւորեցին մի ճանապարհորդի: Աւազակները թռան գնացքից և անյայտացան:

ԲԱԳՈՒ.—Սև քաղաքում այրվում են Բակունիտի գործարանի նաւթապահեստները: Գործարանը այրվեց: Վնասները 100,000 ռուբլուց աւելի են:

ԿԻԷՎ.—Նահանգապետի և վարչութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ բացվեց համառուսական ազգային միութեան ճիւղ:

ՄԻՆՍԿ.—Սեցեվինա գիւղում անյայտ անձինք կողոպտման նպատակով յարձակվել են մի հրէական տան վրա: Սպանված են 4 մարդ:

ՍԱՐԱՏՕՎ.—Երեկոյեան քաղաքի կենտրոնում երեք զինված մարդ յարձակվեցին միլլիոնատէր Խուդոբինի բնակարանի վրա և փող պահանջելով՝ վիրաւորեցին Խուդոբինին, նրա կնոջը և ծառային ու անյայտացան:

ԲՐԷՍՏ.—Քաղաքապետը ճաշ տուեց ի պատիւ «Россія»-ի և մեծ բրիտանական նաւատորմի օֆիցէրների: Ճաշին արտասանվեցին սրտագին բաժակաճառեր:

ՎԻԷՆՆԱ.—Կրամարժը «Նէյէս-Վինէր-Տագէբլատում» նախազգուշացնում է գերմանացիներին խոչընդոտ չը լինել համաձայնեցուցիչ վեհաժողովի աշխատանքներին, մատնանշելով Չեխիայում տիրող իրերի կարգերի վրա, որոնք չեն իրականացնում սահմանադրական բէժիմը. այդօրինակ պայմաններում ամենաչափաւոր չեխ քաղաքագէտները կարող են յարել «առանց չեխական սէյմի բէյխստագն էլ չի լինի» լօզունգին. դրա հետեւանքը կարող է լինել այն, որ Չեխիայում սահմանադրական ճգնաժամը կը փոխվի միապետութեան կիսի սահմանադրական ճգնաժամի:

ԿԻԼ.—Գերմանական կայսրի «Հօհէնցօլէրն» զբօսանաւը դուրս եկաւ Միջերկրական ծովը դիմելու համար:

ԲԵՐԼԻՆ.—Սամօանի արշիպելագոսի Ուպոլու կղզում երկու գերմանացի գիւղատնտես սպանվեցին տեղացի փախստական զինւորների ձեռքով, հետապնդելիս սպանվեցին 3 տեղացի, չորրորդը կալանաւորվեց. վիրաւորվեց կղզու ոստիկանապետը. սպանվեց մի գերմանացի:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ.—Կապիտան Բունգէրը նշանակվեց օսմանեան զօրքի գնդապետ Կ. Պոլսի գերմանական միսսիայի մէջ:

ԼՕՆԴՕՆ.—Թագաւորական ընտանիքը երեկոյեան այցելեց Թագաւորական թատրոնը: Երկրորդ գործողութիւնից յետոյ երեք սուֆրաժիստուհի ելան տեղներից և բարձրաձայն պահանջեցին ընտրողական իրաւունքներ կանանց համար, բայց նրանց դուրս տարան թատրոնից: Հասարակութիւնը զայրացաւ և ողջունեց Թագուհուն:

ԴՐՕՍԷՏՕ.—Պիզայից դուրս եկած արագ գնացքը Րիպէլլիօ կայարանում ընդհարվեց գծից դուրս թռած գնացքին, որ դուրս էր եկել Հռոմից. սպանվեցին 2, վիրաւորվեցին վեց մարդ:

ԼՕՆԴՕՆ.—Լէյդրիմ և Րօսկօմօն կոմսութիւնների մէջ՝ Իռլանդիայում ջրհեղեղ է: Երթևեկութիւնը կանգ է առել: Շատ տեղերում ազգաբնակութիւնը կտրված է քաղաքներից: Փողոցները ջրի մէջ են: Ջուրը շարունակում է բարձրանալ:

ՊԷԿԻՆ.—Արդարադատութեան հրաժարված մինիստր Լիանցիչաոյի և ժող. լուսաւորութեան մինիստր Վանդասէի փոխարէն նշանակվեցին արդարադատութեան մինիստր Զժանցժունսիանը (գերագոյն դատական պալատի նախագահ), երկրորդի տեղ՝ Եան-սիւն (ժող. լուս. նախկին փոխ-մինիստր):

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 և 9 փետրվարի

ՆԷՅՎԻԴ.—Եկաւ ալբանական պատգամաւորութիւնը։ Փողոցները զարդարված են դրօշակներով։ Պալատի դահլիճում Էսադ-փաշան հօֆմարշալին ներկայացրեց պատգամաւորութեան անդամներին, յետոյ դահլիճ մտաւ պրինց Վիլհելմը իր կնոջ հետ, ապա Վիդ պրինցներն ու պրինցուհիները։ Պրինց Վիլհելմը ողջունեց Էսադ-փաշային։ Վերջինս ալբաներէն արտասանեց պատասխան ճառ, որի մէջ ընդգծեց, թէ պատգամաւորութիւնը, որ եկած է խնդրելու պրինցին ընդունել ազատ ու անկախ Ալբանիայի գահն ու թագը, բաղձաւոր է կատարելու ամբողջ Ալբանիայից իր վրա դրված այդ յանձնարարութիւնը։ Էսադ-փաշան աւարտեց ճառը բացագանչելով «Կեցցէ Նորին մեծութիւն ալբանական թագաւորը»։

Էսադ-փաշայի ճառից յետոյ պրինց Վիդը, պատասխանելով գերմաներէն, ասաց, որ ամենասրտագին ողջունում է պատգամաւորութեանը այստեղ, որպէսզի նա ծանօթանայ նրա հայրենիքի հետ. պրինցը ընդունում է Ալբանիայի գահը և մտնում է Ալբանիա իբրև իր նոր հայրենիքը. պրինցին վախեցնում էին պատասխանատուութեան չափերն ու ծանրութիւնը, սակայն այժմ նա իր ամբողջ սրտով պատկանելու է իր այդ երկրին և նուիրելու է նրան իր բոլոր ոյժերը։ Պրինցը հրաւիրում է դէպի ինքը վերաբերվել նոյնպիսի վստահութեամբ, ինչպիսին նա տածում է դէպի ալբանները։ Հաւատացած, որ բոլոր ալբաններից կը գտնէ աջակցութիւն, պրինցը յոյս ունի, որ միացեալ աշխատանքով կաջողվի դնել Ալբանիան բարգաւաճութեան ու փայլուն ապագայի ուղու վրա. պրինցը վերջացնեց, բացագանչելով ալբաներէն՝ «Կեցցէ Ալբանիան»։

Էսադ-փաշան ներկայացրեց պրինցին պատգամաւորութեան անդամներին։ Յետոյ պալատում կայացաւ ճաշ, որի ժամանակ Էսադ-փաշան ճառեց ի պատիւ Վիդ իշխանական տան։ Իշխան Ֆրիդրիխ Վիդը բաժակ առաջարկեց Ալբանիայի համար։

ԲԵՐԼԻՆ.— «Նորդ-Դոյչէ-Ալգ.-Ցայտ.»-ը հաղորդում է, որ պրինց Վիդի մեկնիլը Ալբանիա յետաձգված է։ Պրինցը մտադիր է փետրվարի 13—15-ի միջև լինել Պետերբուրգում Թագաւոր Կայսրին ներկայանալու և ռուս պետական գործիչների հետ բանակցելու համար, յետոյ կը մեկնէ Ալբանիա։

ԱԹԷՆՔ.—Յունաստանը այսօր յանձնեց իր պատասխան նոտան։ Սկզբում մատնանշված է, թէ Եպիրոսի և կղզիների հարցերի միջև կայ կապ, ապա պահանջւում է վարձահատուցումն Յունաստանի վրա դրված սահմանափակումների իրականացման համար։ Յունաստանը կը յայտնէ Թիւրքիային մեծ պետութիւններից առաջարկված պայմանների ընդունելու մասին. երբ Թիւրքիան ընդունէ մեծ պետութիւնների վճիռը, Յունաստանը պատրաստ է հնազանդվել կղզիները չամրացնելու պահանջին և յոյս ունի, որ մեծ պետութիւնները կպահովեն կղզիները յարձակումից Փոքր Ասիայի ափի կողմից։ Յունաստանը միջոցներ ձեռք կառնէ կոնտրաբանդի դէմ կղզիների և Թիւրքիայի միջև և հրաշխիքներ կը տայ կղզիների մահմեդական ազգաբնակութեանը։ Սակայն նա յոյս ունի, որ մեծ պետութիւնները կպահովեն Տենէդոսի, Իմբրոսի և Կաստէլլօ-Րիզօյի յոյն ազգաբնակութեան դպրոցներն ու եկեղեցիները և միւս արտօնութիւնները, որ նա վայելում էր սկզբում։ Յունաստանը ընդունեց Ալբանիային յանձնելու համար Սասէնօ կղզին և կարգադրեց իր զօրքերին դուրս ելնել նուաճված տեղերից։ Միաժամանակ խոստացվում է չը նպաստել ուղղակի կամ անուղղակի կերպով ապստամբվելու փորձերին։ Վերջաբանում Յունաստանը առաջարկում է, ի նկատի ունենալով տնտեսական ու ռազմագիտական շահերը, ուղղել մասնակի կերպով սահմանները և յոյս է յայտնում հուսկ յետոյ, թէ մեծ պետութիւնները անկողմնապահօրէն կը քննեն Յունաստանի առաջարկութիւնները։

ԲԵԼԳՐԱԴ.—Գահաժառանգը վերադարձաւ մայրաքաղաք Մօնաստիրից, որի շրջանում նա զբաղվեց որսորդութեամբ։ Արտասահմանեան մամուլի այն տեղեկութիւնները, թէ գահաժառանգը գնաց զօրքը և մեկնել էր Մօնաստիր զինւորական նպատակներով, մտացածին են։

ՍՕՖԻԱ.—Պահեստի զինւորների գաղթը արգելող հրամանը վերացվեց։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Սենատի ընտրութիւններին անցան 40 լիբերալ, 5 պահպանողական և 8 դեմօկրատ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆ

Թիֆլիսում, ամսիս 9-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց տիկին Մարիամ Ս. Խատիսեան, 69 տարեկան հասակում։

Հանգուցեալը, մայր նորերս վախճանված Կոստանդին Խատիսեանի, և Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի, ամուսին Թիֆլիսեցիներին լաւ ծանօթ հասարակական և պետական գործիչ Յովհաննէս Խատիսեանի, յայտնի է նաև հայ գրական աշխարհին, Մարիեան անունով, իբրև հեղինակ մի քանի վէպերի, որոնք տպվել են Արասխանեանի «Մուրճ» ամսագրում և առանձին։

Նա ոչ միայն կին-գրող էր, այլ և հասարակական գործիչ, լինելով երկար ժամանակ անդամ և նախագահ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, (սկսած 1882 թուից մինչև 1807 թիւը) զանազան ազգային, հասարակական հաստատութիւններին։ Նրա սալոնը, մի ժամանակ, Թիֆլիսի առաջաւոր ինտելիգենտ հասարակութեան ժամադրութեան վայր էր, ուր քննվում և արծարծվում էին գրական և գեղարուեստական հարցեր։

Հանգուցեալն իր ամուսնու հետ մեծ յարգանք էր վայելում հասարակութեան մէջ, իբրև բարձր ինտելիգենտ կին, իբրև հասարակական ջիղ ունեցող կին։ Վերջին տարիները նա տառապում էր քաղցկեղ հիւանդութեամբ, որ ծանրացաւ իր սիրելի անդրանիկ որդու՝ Կոստանդինի վաղաժամ մահվամբ։

Իբրև գրող և բեղմնաւոր գրող, հանգուցեալը թէև մի նոր ուղղութիւն չը ստեղծեց հայ գրականութեան մէջ, բայց՝ նրա վէպերը նկարագրելով անցողական շրջանը՝ տգիտութիւնից դէպի քաղաքակրթութիւն, շօշափելով նաև իդէալական տիպեր, իրանց որոշ տեղն են գրաւում հայ բելլետրիստիկայի մէջ։

«Մշակի» խմբագրութիւնը, որի անդամները կազմել են հանգուցեալի սալօնի յաճախորդները և ի մօտոյ ծանօթ են այդ հայ կին-գործչի ու գրողի բարոյական վեհ յատկութիւնների հետ, իր անկեղծ ցաւակցութիւնն է յայտնում Խատիսեան ընտանիքի և հայ գրական աշխարհի կրած կորստի համար։

Հանգուցեալը կտակով, ինչպէս հաղորդում են մեզ, թողել է 10,000 ր. յօգուտ Հայուհեաց Բարեգործ. Ընկ., որի նախագահն էր երկար տարիներ։

Հանգիստ բազմաշխատ և առաքինի կնոջ՝ Մարիամ Խատիսեանի աճիւններին։

Հ. Ա.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կիրակի, փետրվարի 9-ին, Ժողովրդական Տանը կայացաւ Թիֆլիսի ժողովրդական համալսարանի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի շարունակութիւնը 270 անդամի մասնակցութեամբ, անցեալ ժողովից ընտրված Ա. Երզնկեանի նախագահութեամբ և Դգեբուաձէի քարտուղարութեամբ։

Վարչութեան ներկայ 1914 թ. համար կազմած ելևմտից նախահաշիւը հաստատելուց յետոյ, ժողովը անցաւ վարչութեան անդամների ընտրութեանը։

Վարչութեան անցեալ տարվայ կազմը բաղկացած էր 18 հոգուց, որոնցից 7 հոգի ժամանակից առաջ կազմից հեռացել էին, իսկ երկու հոգի էլ, վերջացրած լինելով իրանց պաշտօնավարութեան ժամանակը, նոյնպէս համարվում էին կազմից դուրս. այսպիսով կազմում մնում էր 9 հոգի։ Եւ որովհետև ժողովը՝ ի նկատի ունենալով գործի լայն ժողովրդականութիւն ստացած լինելը, հետևապէս և այդ գործը կատարելու համար պահանջվող ոյժի մեծութիւնը, որոշեց վարչութեան կազմը 18 հոգուց դարձնել 24-ի, ուստի հարկաւոր էր ընտրել 15 հոգի ևս։

Ժողովը իր պաշտօնավարութիւնը լրացրած լինելու պատճառով վարչութեան կազմից դուրս հանվող Վ. Րցխիլաձէին և Բ. Մկրտումեանին միաձայն բաց քուէարկութեամբ վերընտրելուց յետոյ, թերթիկների միջոցով ընտրեց հետևեալ նոր անդամներին.

1) Պավլօվ, 2) Դգէբուաձէ, 3) Նիկալիշվիլի, 4) Լորիս, 5) Ցուլուկիձէ, 6) Կոզլօվ, 7) Երզնկեան, 8) Միտեխելի, 9) Թարխանով, 10) Թումանով, 11) Միխայլիձէ, 12) Փարնին, 13) Եսայեան։

Հին կազմից մնում են՝ Գալաչեան, Կուցիւավա, Կովալեվ, Երմոլաեվ, Մարգարեան, Աբազեան, Դուրգլիշվիլի, Կախէլաձէ և Լեման։ Այսպիսով վարչութեան ներկայ կազմը բաղկացած է 24 հոգուց։

Վերահսկիչ մասնաժողովի անդամների ընտրութիւնը, ժամանակի ուշ լինելու պատճառով, յետաձգվեց հետևեալ ընդհանուր ժողովին։

Բ. Մ.

ՀԱՐՑԻՆ ՀԱՐՑ

Նկարիչ պ. Գ. Բաշինջաղեանը «Մշակի» № 21-ում իր «Անտեղի յարձակումն» վերնագրով յօդուածում ինձ հարցնում է, թէ ովքե՞ր են այն անճեռնհաս անձինք Էջմիածնի վանքի վերանորոգման մասնաժողովում, որոնց մասին ես ակնարկել եմ իմ «Նամակներից» մէկում։

Հարցն իր ճիշդ հասցէին չէ ուղղված։ Պէտք է դիմել այն ժողովին, որի խօսակցութեան սոսկ արձանագրողն եմ եղել։ Ես ինձնից ոչ մի բան չեմ աւելացրել։ Ընդհակառակը ես շատ մեղմացրել եմ և սեղմել բովանդակութիւնն այն չափազանց աննպաստ կարծիքների, որ արտայայտվեցին այդ ժողովում։ Մի արձանագրող մի ժողովում խօսվածների պատասխանատուութիւնն իր վրա վերցնել չէ կարող։

Իմ կողմից թոյլ եմ տալիս հարցնելու պ. Բաշինջաղեանին։ Ճիշդ է, որ հէնց այս վերջին օրերս Էջմիածնի Պետը հրամայել է դադարեցնել վանքի վերանորոգումը։ Եթէ ճիշդ է, ինչ է պատճառը։ Նիւթակա՞նը, թէ մասնաժողովը, որ, ինչպէս պ. Բաշինջաղեանը հաւատացնում է, բաղկացած է «բարձրագոյն ցենզով» մասնագէտներից։

Ինչ վերաբերվում է պ. Բաշինջաղեանի խօսքին, թէ ես կօմպետենտ չեմ, կարող եմ ապահովել պարոնին, որ ես երբեք ինձ կօմպետենտ չեմ համարել ճարտարապետութեան մէջ։ Բայց կը կամենայի իմանալ, թէ ինքը պ. Բաշինջաղեանն ինչո՞վ է կօմպետենտ նոյն մասնագիտութեան մէջ։ Կարծում եմ, որ պէյզաժի և հին հայկական ճարտարապետութեան միջև նոյնքան զանազանութիւն կայ, որքան դրամայի կամ վէպի և նոյն ճարտարապետութեան միջև։

Շիրվանզադէ

Մոսկվա, 3 փետրվարի

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԹԵՄԱԿԱՆ ԱՅՑԸ

Գօրուց, Ցխինվալից, Սուրամից, Քութայիսից ու Ախալքալաքից (Գօրու) ստացել ենք թղթակցութիւններ, որոնցով հաղորդվում է Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպ.-ի կատարած թեմական այցելութեան մասին։

Սրբազանը ամսիս 2-ի ցեր. ժամը 12-ին մտել է Գօրի, ուր նրան ցոյց է տրվել շքեղ ընդունելութիւն, առանց ազգի խտրութեան։ Առաջնորդն այդտեղ ամսիս 3-ին այցելել է հայոց եկեղեցիները, ծխ. դպրոցը։ ապա աղջկանց և տղայոց գիմնազիաները։ Մեսրոպ եպ. տեղն ու տեղը ծանօթացել է տեղական գործակալ Ցակ. քահ. Խուցեանի դէմ եղած մեղադրանքների հետ, իսկ հետևեալ օրը, ամսիս 4-ին, մեկնել է Ցխինվալ, ուր հասել է նոյն օրը։

Այստեղ ևս առաջնորդին ցոյց է տրվել պատշաճաւոր ընդունելութիւն՝ Խախանեան աւ.-քահանայի գլխաւորութեամբ։ Վերջինս եկեղեցում արտասանել է մի ճառ՝ ցոյց տալով տեղական ժողովրդի կարիքները։ Վրաց հոգևորականութեան կողմից խօսել է հ. Ս. Խիլամով։ Առաջնորդն իր պատասխան-ճառի մէջ յիշել է հայ և վրացի ժողովուրդների անցեալ եղբայրական յարաբերութիւնների մասին։ Առաջնորդի խօսքերը վրացերէն թարգմանել է հ. Խախանեանը։ Սրբազանը եկեղեցուց դուրս գալուց յետոյ այցելել է հայոց ծխ., ինչպէս և պետ. դպրոցները, իսկ յետոյ՝ վրաց եկեղեցին, ուր ռուսերէն ողջունել և օրհնել է վրացի ժողովուրդը։

Ցխինվալից մեկնելով առաջնորդը այցելել է Սուրամի իր հօտին ու ծանօթացել նրա կարիքների հետ։

Իսկ ամսիս 6-ին՝ Մեսրոպ եպ. ժամանել է Քութայիս, ուր նոյն օրն իսկ այցելել է նահանգապետին, վրաց եպիսկոպոսին, ազնուականների պարագլխին, քաղաքագլխին, և ընդունել նրանց փոխ-այցելութիւնները։ Ամսիս 7-ին նա մեկնել է Գէլաթի վանքը, այնտեղի հնութիւնները դիտելու։ Ապա նոյն օրը երեկոյեան, պաշտօնական հանդիսաւոր ճաշից յետոյ, որով տեղական հայ հասարակութիւնը պատւել է իր հիւրին, սրբազանը մեկնել է Քութայիսից դէպի Ախալքալաք (Գօրու գաւառ), ուր հասել է ամսիս 8-ին։

Այստեղ ևս մնալով մի քանի ժամ և ծանօթանալով իր հօտի դրութեանն ու նրա կարիքներին, Մեսրոպ եպ. նոյն օրն իսկ վերադարձել է Թիֆլիս։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ *)

II

I համառուսական ժողովրդ. կրթութեան համագումարը

Ը.

Օտարազգիների մասնաժողովը իր վերջին նիստում լսում է պրեզիդիումի կազմած ընդհանուր րէզօլիւցիան, որը կազմելիս ի նկատի են ունեցել բոլոր կարդացված զեկուցումները և ընդունված թեզիսները։ Այդ րէզօլիւցիան սկսվում է օտարազգի դպրոցների ներկայ անմխիթար դրութեան նկարագրութեամբ և անհրաժեշտ է համարում հետևեալ փոփոխութիւնները.

1) Հիմնական վերացումն օրէնսդրական և ադմինիստրատիվ նորմաների, որոնք այսպէս կամ այնպէս սահմանափակում են որևէ ազգութեան կամ խմբակցութեան իրաւունքները։

2) Ռուսաստանի բոլոր ազգութիւնների դպրոցական գործի ապահովումն՝ ընդհանուր, պարտադիր և ձրի ուսուցման նպատակով և փոքրամասնութեան շահերը ի նկատ առնելով։

3) Գաւառական ինքնավարութեան մարմինների ռամկավարացումն, և դպրոցների վերահսկողութիւնը սրանց յանձնելը։

4) Ազատ և անարգել օգտագործումն մայրենի լեզուի և մայրենի գրականութեան՝ ինչպէս դպրոցական, նոյնպէս և տնային դաստիարակման և ուսուցման միջոցներ։

5) Ռուսաց լեզուի պարտադիր ուսուցումը երրորդ տարվանից, բացառիկ դէպքերում միայն երկրորդ տարվանից։

6) Իւրաքանչիւր ազգութեան ապահովել տեղական լեզուները իմացող ուսուցիչներով։

7) Մասնաւոր մարդկանց տալ իրաւունք բանալ դպրոցներ, ուր առարկաների դասաւանդումը լինելու է մայրենի լեզուով։

8) Բանալ մասնագիտական մանկավարժական դասընթացքներ՝ տեղական լեզուներով։

9) Հաստատել տեղական լեզուների ամբիոն բարձրագոյն դպրոցներում և

10) Կազմակերպել շրջանային ուսուցչական համագումարներ։

Պրեզիդիումի առաջարկած այս բանաձևը ընդունվում է բուռն ծափերով (դէմ են 2-ը)։

Այսքանով և վերջանում են օտարազգիների մասնաժողովի աշխատանքները. վերջում շնորհակալութիւն են յայտնում պրեզիդիումին, զեկուցանողներին, խօսում են տարբեր ազգութեան ներկայացուցիչներ և կրկին տեսնվելու ցանկութիւնն են յայտնում։ Ապա պրեզիդիումի անդամ Պեշեխոնովը, խօսելով մայրաքաղաքի «Нов. Вр.» լրագրի տպած անճիշդ և բանսարկու յօդուածների մասին, առաջարկում է մասնաժողովին բողոք յայտնել մամուլի այդ կարգի օրգանների դէմ. դահլիճը դղրդում է որոտընդոստ ծափերից և նախագահի մի քանի խօսքից յետոյ փակվում է մեզ այսքան զբաղեցնող մասնաժողովը։ Ընդունված ընդհանուր բանաձևը որոշում են ներկայացնել համագումարի նախագահին՝ վերջինիս ընդհանուր նիստում ամբողջ համագումարի առաջ կարդալու և նրա հաւանութիւնը առնելու։ Բայց համագումարի նախագահ սենատոր Մամօնտովը սառն է վերաբերվում մասնաժողովից ընդունված բանաձևին, նա վախենում է ընթացք տալ այդ րէզօլիւցիային՝ համագումարի սանկցիան ստանալու, կարծելով թէ դրան անմիջապէս կը հետևի համագումարի փակումը կառավարութեան կողմից. և բանաձևի միջից մի քանի խիստ նախադասութիւններ կրճատելով՝ թոյլատրվում է այդ միայն կարդալ և յայտնել, որ դա օտարազգիների մասնաժողովի ընդունած բանաձևն է. և ոչ ամբողջ համագումարի։ Այս աննասելի արգելքի պատճառով վերև բերված ընդհանուր բանաձևը մնաց սոսկ մասնաժողովի անունով, չը ստացաւ այն հեղինակաւոր հաստատումը, որին սպասում էին. այդ իսկ պատճառով օտարազգիների մասնաժողովի շատ անդամներ ոչ մի մխիթարական բան չէին տեսնում. կեանքի մէջ այդ բանաձևը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ

(Ռուս բանւոր բանաստեղծները)

I

Անցեալ անգամ, խօսելով ռուս գրականութեան մասին, մենք ընդհանուր ակնարկ ձգեցինք նրա մօտ անցեալի, գլխաւորապէս վերջին եօթնամեակի վրա, ընդգծելով նրա անհատական-իմպրեսիօնիստական բնոյթը։ Սակայն մենք ոչինչ չասացինք գրական այն արտայայտութիւնների մասին, որոնք այսօր բղխում են բանւորական իրականութեան խորքից, որոնց բոլորի հեղինակներն էլ իրանք բանւորներն են։

Խօսելով ռուս գրականութեան րէալիզմի մասին, կամ նրա զգաստ արտայայտութիւնների՝ մօտ անցեալի այն բոլոր կօշմարներից ու հիւանդագին վիժումներից յետոյ, չէ կարելի լռութեամբ անցնել բանւորական բանաստեղծութեան մօտով, որովհետև այդ երևոյթը կապված է ապագայի հետ. գրական այդ հոսանքը հետզհետէ պիտի ուժեղանայ, պիտի ծաւալվի, մի նոր ուղղութիւն, մի նոր թափ մտցնելով ընդհանուր գրականութեան մէջ։

Ռուս բանւորական կամ պրօլետար տարբեր գրական արտայայտութիւնների մասին մենք առաջին անգամ գրել էինք՝ սրանից մի երկու տարի առաջ՝ «Արօր» ամսագրում. բայց այն նիւթը, որ այժմ ունենք մեր ձեռքի տակ, միանգամայն տարբերվում է նախկինից իր ճոխութեամբ ու արտայայտութիւնների բազմազանութեամբ։

Ինչպէս առաջին անգամ, ներկայ դէպքում ևս մենք ի նկատի ունենք Լ. Կլէյնբորէի մի շահեկան յօդուածը «Современный Міръ» ամսագրում, որտեղ նա պարբերաբար զետեղում է իր նիւթերը այն բոլոր բանաստեղծութիւնների ու ոտանաւորների մասին, որոնք գիտակից բանւորների գրչին են պատկանում։

Մինչև այժմ ինտելիգենտ բանաստեղծներից շատ շատերն են գրել բանւորների, աշխատաւորների, շահագործվողների վերաբերումների մասին, սակայն դրանք բոլորն էլ ըստ մեծի մասին եղել են ֆիլանտրօպիական զգացմունքի արտայայտութիւններ։ Բանւորների և բանւորականութեան մասին շատ է գրվել առհասարակ, սակայն ինքը բանւորը չէ եղել գրականութեան մէջ հանդէս եկողը։

Այժմ փոխվել է պատկերը։ Եւ քանի որ բանւորականութիւնը հետզհետէ պիտի գիտակցի իր ապագայ դերի նշանակութիւնը, քանի նրա առաջխաղացութիւնը աւելի ևս պիտի կապվի իր կատարելիք կուլտուրական միսսիայի մեծութեան հետ, այնքան նրա թափն ու շեշտը ուժեղ պիտի լինի գրական շարժման մէջ։

Ռուս բանւորականութիւնը այսօր իր շարքերում ունի հարիւրաւոր թէ սկսնակ և թէ փորձված, նոր իսկ պրօֆեսիօնալ բանաստեղծներ ու ոտանաւոր գրողներ, որոնք ըստ մեծի մասին իրանց գրուածքները զետեղում են բանւորական օրաթերթերում ու զանազան պարբերականներում։ Բանւորների մէջ այս րոպէիս կան կազմակերպված գրական շրջաններ, ինչպէս, օրինակ, «Սուրիկովի գրական շրջանը» Մոսկվայում, կան նաև թատրոնական գործիչներ և արտիստներ։ Բայց բանւոր բանաստեղծների ու գրողների հանդէս գալու և բեղմնաւորվելու գործում ամենամեծ դեր խաղացողը բանւորական մամուլն է, յանձին լրագիրների և ամսաթերթերի։

Բանւորական թերթերից իւրաքանչիւրը իր բանւոր բանաստեղծներն ունի։ Կլէյնբորտի ասելով՝ «Правда» բանւորական լրագրի շուրջը խմբված են եղել մօտ հարիւր բանաստեղծներ ու աշխատակիցներ։

Բանւորական գրական շրջաններից մի քանիսը արդէն ունեն իրանց բանաստեղծների առանձին ժողովածուների հրատարակութիւնները, ինչպէս, օրինակ, Գանշին, Ս. Կօշկարօվ և ուրիշ բանաստեղծների գրուածքները՝ «Կայծեր», «Բօսեակներ», «Հարազատ դաշտերում», «Աշնանային ծաղիկներ» վերտառութեամբ։ Գրական մի այլ խմբակ Վօրօնէժ քաղաքում հրատարակել է իր աչքի ընկնող բանաստեղծ Նազարօվի «Կեանքը և երգերը» ժողովածուն։

Այս բանաստեղծի խմբագրութեամբ դեռ 1910 թւին լոյս է տեսել «Հարազատ քնար» խորագրով բանաստեղծութիւնների ընկերական ժողովածուն, իսկ 1911 թւին՝ «Լոյսի ճանապարհին» և «Զարթնումն» ալմանախը։ Կրէվի նոյնօրինակ գրական խմբակը իր «Կրակներ» հրատարակութեան մէջ գրում է. «Այն գրողները, որոնք ձգտում են դէպի մօդեռնիզմ, մեզ համար օտար են միանգամայն. լսում էք։ Անհրաժեշտ է, որ մեր մէջ մտքերի փոխանակութիւն լինի, մեր՝ ժողովրդից դուրս եկածներիս մէջ։ Մենք պէտք է ժողովրդից դուրս եկած գրողներից կազմենք մեր շրջանը՝ նման Մոսկվայի Ի. Զ. Սուրիկովի անուան կազմված շրջանի»։

Այսօրինակ շրջանների թիւը հետզհետէ բազմանում է ռուսական զանազան քաղաքներում։

Ի՞նչ են գրում այդ բանւոր բանաստեղծները. ինչպիսի զգացմունքներով ու վերաբերումներով են հանդէս գալիս նրանք. որո՞նք են նրանց ուղեղը մաշող մտորումներն ու խոկումները։

Ինչպէս սօցիալական դրութեամբ, այնպէս էլ աշխարհահայեացքով ու զգացմունքներով պրօլետար բանաստեղծը չէ խօսում միայն իր կացութեան նեղ շրջանակից։ Նրա մտաւոր հորիզոնը լայն է։ Նրա քնարին յատուկ են ոչ միայն իր անհատական զգացմունքների գեղումները։ Նրա քնարը օժտված է այնպիսի լարերով, որոնք ընդունակ են հնչեցնելու հասարակական հեծեծանքներ։ Ժամանակակից բանւորի հոգեբանութիւնն ու տրամադրութիւնները ամբողջովին գտնում են իրանց հարազատ թարգմանին այդ բանաստեղծութեան մէջ։

Բանաստեղծներից իւրաքանչիւրը գրում է այնպէս, ինչպէս զգում և ինչպէս անդրադառնում է նրա ուղեղում շրջապատող իրականութիւնը։ Ճիշդ է, նրանցից շատերի գրուածքները բանաստեղծութիւններ չեն, այլ սոսկ ոտանաւորով արտայայտված զգացմունքի անկեղծ փղձկումներ, որոնց մէջ գեղարուեստական պատկերացումն ու չափը, երաժշտականութիւնն ու խորութիւնը տակաւին պակասում են, սակայն այն ամենը, ինչ տեղ է գտնում այդ բանաստեղծութեան մէջ, գերազանցօրէն ինքնատիպ է և արժանի ամենալուրջ ուշադրութեան։ Բայց կան նրանց մէջ այնպիսիներ էլ, որոնք տաղանդաւոր գրչի արտադրութիւններ են և ունեն գեղարուեստական որոշ արժանիք։

Թէ ինչ մտորումներ են մաշում նրանց ուղեղները և թէ ինչ զգացմունքներով է լցված նրանց սիրտը, այդ մենք իմանում ենք այն մօտիվներից, որոնք տեղ են գտնում նրանց բանաստեղծութեան մէջ։

Հասարակական զանգուածի իբր մի որոշ մասնիկը լինելու գիտակցութիւնը առաջին տեղն է բռնում բանւորական լիրիզմի մէջ։ Մէկը գրում է.

Ես մենակ չեմ։ Բազմաթիւ ենք մենք աշխարհում...
Մեր անպաճոյճ պօէզիայով յառաջորդներին ճամբայ
հարթում...

Եւ ուրիշների համար ճամբայ հարթող բանաստեղծների շարքում մենք գտնում ենք զանազան պրօֆեսիայի բանւորներ. այստեղ կան և՛ գրաշարներ, և՛ փականագործներ, հանքագործներ, ջուլհակներ, հիւսներ, հնոցպաններ, քարհատներ, գործակատարներ, և այլն և այլն։

Նրանցից ոմանք իրանց ոտանաւորները գրել են բանտերում կամ բանտային հիւանդանոցներում, ինչպէս Ալ. Գմիրօվ բանւորը, որը (24 տարեկան հասակում ծանր տառապանքների մէջ մահացել է բանտում) իր տանջանքներն ու նուիրական տենչերը արտայայտել է իր էլէգիաներից մէկի մէջ։

Ես կը մեռնեմ. բայց ինձ հետ երբեք չեն մեռնի
պրօլետարի իմ երգերը...
Ես կը մեռնեմ. բայց բանտում ինձ հետ չի լռի
իմ շղթայված զօղարկի մուսան...

Բանւորի միջավայրը քաղաքն է, գործարանական կեանքն է, դադար չունեցող մեքենան։ Եւ բանւոր բանաստեղծի ականջին շարունակ և ամեն տեղ հնչում է «պողպատի և պղնձի զրնգոցը», գործարանի արթուն սուլոցն ու մեքենաների խուլ ոռնոցը։ Բանաստեղծը ամեն կողմից շրջապատված է աղմուկով. նա ճնշված է այդ աղմուկից։ Դա մի ժխոր է, որը բանւորին մի կտոր չոր հաց տալու համար՝ անօրի-

---

*) Տես «Մշակ» № 24.

չի իրականանալ, մինիստրութիւնը ոչ մի ուշադրութիւն չի դարձնի, քանի որ համագումարի նախագահը կողմնակից չէ այդ բիզոլիւցիային և չէ հաստատված այդ համագումարի կողմից։ Միամտութիւն էլ կը լինէր կարծել, թէ ներկայ հանգամանքներում օտարազգիների ընդունած ցանկութիւնը կիրագործվի կեանքում. բայց չը նայած այս հանգամանքին, օտարազգիների մասնաժողովի բիզոլիւցիան ունի խոշոր հասարակական նշանակութիւն։ Այս առաջին դէպքն էր, երբ լայնածաւալ Ռուսաստանի հեռաւոր անկիւններից ի մի էին ժողովվել մանր ազգութեանց ներկայացուցիչները և իրար հետ խօսում էին իրանց ցաւերի մասին, իրար դարդ էին պատմում. և տեսան, որ բոլորին տանջում է միատեսակ ցաւ. այդ գիտակցութիւնը ինքնին մի նշանակալից յաղթանակ է, որ արին մանր ազգերը. Նրանք դուրս եկան իրանց նեղ շրջանակներից և լայն ասպարէզում տեսան իրանց նման շատերին. այս նորութիւնը և այդ գիտակցութիւնը մանր ազգութիւններին կը թելադրեն նրանց յետագայ քայլերը, թէ ինչ պէտք է անել։ Իսկ ռուս հասարակութիւնը, որ երբեք կողմնակից չէ ռուս քաղաքականութեան, աչքի անցկացնելով օտարազգիների մասնաժողովի ընդունած ցանկութիւնները և ընդհանուր բանաձևը—նոյնպէս կը պարզէ, թէ ծվքեր են այդ օտարազգիները, ինչումն է կայանում նրանց տրտունջն ու դժգոհութիւնը, և պարզ է, որ ընդ առաջ կը գնան նրանց արդարացի պահանջին—իրանց զաւակներին մայրենի լեզուով դաստիարակելուն։ Մամուլի բազմաթիւ օրգանների միջոցով, հասարակութիւնը ծանօթացաւ օտարազգիների դպրոցական ցաւերին. հասարակութեան այդ ծանօթութիւնը, մանր ազգերի ազգակցական շաղկապման գիտակցութիւնը՝ այն երկու բարոյական յաղթանակներն են, որ ունեցաւ օտարազգիների մասնաժողովը. մինիստրութիւնը կարող է անտես անել այս մասնաժողովը, բայց հասարակական միտքը շատ սրատես է և արդարամիտ. Նա կը տեսնի մանր ազգերին ճնշող անարդար խստութիւնը և կը պատրաստվի վերցնել այդ։

Գ. Տէր-Ռուբինեան

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Թիֆլիսից հեռագրում են մայրաքաղաքի թերթերին, որ պօլիտեխնիկումի գըլխաւոր կոմիտէտը վճռել է հրաւիրել պօլիտեխնիկումի կազմակերպութեան համար Ռիգայի պօլիտեխնիկումի քիմիական բաժանմունքի նախկին դեկան ակադեմիկոս Վալդէնին։

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան մէջ նախագիծ է մշակվում Թիֆլիսում առևտրական ինստիտուտ բանալու համար։

◆ Գօրի, Ցխինվալ, Ախալքալաք (Գօրու գ.) և Քութայիս այցելելուց յետոյ Թիֆլիսի թեմի առաջնորդ Միսրայ եպիսկոպոս վերադարձաւ Թիֆլիս փետրվարի 8-ի երեկոյեան։

◆ Նաւթլուղի նորաբաց հիւանդանոցի օծման հանդէսը կատարեց Վրաստանի էկզարխը։ Հանդէսին ներկայ էին կոմսուհի Վօրոնցօվա-Դաշկովան, փոխարքայի զինուորական մասի օգնական Ա. Զ. Միշլաեվսկին, հօֆմէյստր Պետերսօն և այլ բարձրաստիճան անձինք։

◆ Մօտ օրերս Թիֆլիս է գալու «Русское Слово» թերթի աշխատակից Սերգէյ Նարլոնովսկին, այստեղ մի շարք դասախօսութիւններ կարդալու։ Ի միջի այլոց նա խօսելու է ինքնասպանների մասին։

◆ Կայսերական ռուսական պտղաբուծական ընկ. Թիֆլիսի բաժանմունքը այս տարի երկրագործութեան դեպարտամենտից ստացել է՝ այգեգործութիւնը և բանջարաբուծութիւնը քննելու համար 500 ր., Գօրիի գաւառի պտղաբուծական ժամանակակից դրութեան մասին ուսումնասիրութիւն տպագրելու համար՝ 400 ր., Անդրկովկասի պտուղների մասին ուսումնասիրութիւն հրատարակելու՝ 300 ր., Նշանաւոր գրքեր հրատարակելու՝ 150 ր., գրքեր և դասախօսութիւնների համար հարկ եղած նիւթեր ձեռք բերելու—300 ր., այգեգործ-ինստրուկտօրներ պահելու համար՝ 1500 ր.։

◆ Առևտրական գիտութիւնների դասընթացքների հիմնադիր Տ. Մ. Փիլոյեանը մտադիր է Թիֆլիսում հիմնել առևտրական գիտութիւնների բարձր դասընթացքներ, որի համար և կազմել է մի կանոնադրութիւն և ներկայացրել առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեանն ի հաստատութիւն։

◆ Բուսաբանական այգու Թանգարանը Ախալցխայի անտառապահ Վ. Ա. Ռուսկինից ստացել է 35 տեսակ ծառի կտորներ։

◆ Կիրակի օրը տեղի ունեցաւ ձրի հիւանդանոցի օծումը։ Հիւանդանոցը կահաւորել է գթութեան քոյրերի ռուսական ընկերութեան վարչութիւնը իր միջոցներով, իսկ քաղ. վարչութիւնը որոշել է իւրաքանչիւր տարի հիւանդանոցին յատկացնել որպէս նպաստ 300 ր.։ Հիւանդներին բժշկական օգնութիւն պէտք է ցոյց տան զինուորական հիւանդանոցի բժիշկները։

◆ Ջրամոյններին օգնող կայսերական ռուսական ընկերութիւնը ի նկատի ունենալով որ լեռներում թափված առատ ձիւնը շուտով կը հալվի, որից և Կուր գետը վարարելով կարող է վնասներ առաջացնել, դիմել է նահանգապետին, խնդրելով որ կարգադրութիւն արվի գետի մօտ բաւականաչափ թւով նաւակներ պատրաստելու՝ իրանց օժանդակ պարագաներով, և որոշ անձանց պարտաւորեցնել գետի ջրի դրութեանը հետևելու։

◆ Ամերիկայի Նիւ-Եօրկ քաղաքում հրատարակվող «The Oriental World» (Արևելեան Աշխարհը) պատկերազարդ ամսագրի այս տարվայ փետրվարի համարում տպված են հանգուցեալներ Ս. Զաւարեանի, Ալ. Քալանթարի, Հ. Լինչի պատկերները և կենսագրութիւնները։ Միևնոյն համարի մէջ սկսել է տպվել Շահրիարի «Ջհուդ Բուշան» վէպը անգլիերէն թարգմանութեամբ։

◆ Այսօր Կովկ. կայսեր. Գիւղատնտ. Ընկ. շէնքում կայանալու է այս գարնանը Թիֆլիսում մելիօրատիվ համագումար կազմակերպող մասնախմբի նիստը։ Ընթացիկ գործերի քննութեան հետ միասին տեղի կունենայ նախագահի ընտրութիւն։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Նախանցեալ գիշեր Սանահին և Ախթալա կայարանների միջև գնացքը ենթարկվել է աւազակների թալանին։ Դէպքը պատահել է այսպէս։ Ախթալա կայարանից մի խումբ մարդիկ, մտնելով վագոնները, սկսել են զէնքի ոյժով խլել ճանապարհորդների, գլխաւորապէս 1-ին և 2-րդ կարգի վագոնների, փողերն ու արժէքաւոր իրերը, որի միջոցին սպանել են ժանդարմ Բոգոմոլովին և վիրաւորել երկու հոգու։ Այս բոլորը կատարելուց յետոյ աւազակները իջել են Սանահին կայարանի մօտերքը և անյայտացել։

◆ Ինչպէս ասում են, Բագւում էլեքտրաքարշ կառուցելու գործը իրանց վրա է վերցրել տեղական դրամատէրերի մի խումբ՝ Մուսա Նաղիեւի և Հ. Զ. Ա. Թաղիեւի գլխաւորութեամբ։

◆ Եկող գարնանից էկսկուրսիայով Կովկաս են գալու Թիւրքական դպրոցների աշակերտութիւններից մի քանի խմբեր, Կովկասի հետ ծանօթանալու նպատակով։ Առաջին էկսկուրսանտները կը լինեն Կ. Պոլսի դպրոցների ամեն ազգի աշակերտութիւնից։

◆ Միջնորդութիւն է յարուցված Միխայլովօյում (Գօրու գաւառ) բէյական դպրոց բացելու համար։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետ. Դումայի կուլուարներում ճըշդում են այն լուրերը, որ ժող. լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ նշանակվում է Պետ. Խորհրդի անդամ Իշխ. Դ. Գոլիցին-Մուրավլինը։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ արտաքին գործերի մինիստր Սազոնովի հրաժարականի դէպքում այդ պաշտօնը յանձնվելու է Լոնդոնում պաշտօնավարող ռուսաց դեսպան կոմս Բենկէնդօրֆին, որ մեծապէս աջակցել է երրեակ համաձայնութեան ամրապնդման և շատ մօտիկ յարաբերութեան մէջ է անգլիական արտաքին քաղաքականութիւնը ղեկավարող սըր Գրէյի հետ։

◆ Մայրաքաղաքի լրագիրները միևնոյն ստոյգ աղբիւրներից յայտնում են, որ զինուորական մինիստր գեներալ Սուխոմլինովը նշանակվել է Վարշավայի գեներալ-նահանգապետ։

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով արդարադատութեան մինիստր Շչեգլովիտօվը մշակում է մի օրինագիծ տեղական դատարանը բոլոր նահանգների ու շրջանների վրա տարածելու մասին։

◆ «Н. Вр.»-ի ասելով, Կուրսկի նահանգապետ Մուրատօվը նշանակվելու է Ներքին գործերի մինիստրի օգնական։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

«ԿԱՐՄԻՐ ՄԵԽԱԿՆԵՐԸ» ՄՈՍԿՎԱՅԻ ԲԵՄԻ ՎՐԱ

—

Մոսկվա, 28 յունվարի

Երէկ, ամսիս 27-ին, ռուսաց Որսորդական ակումբում կայացաւ Մոսկվայում Սովորող Հայուհիներին Նպաստող Կանանց Ընկերութեան երեկոյթը։

Երեկոյթը կազմված էր երկու բաժնից։

Առաջին բաժնում խաղացվեց Իվանովի «Ցայտարարութեամբ» («По публикаціи») մէկ գործողութեամբ ֆարսը ռուսերէն լեզուով։

Խաղում էին տեղացի հայ սիրողներ. մենք առանձնապէս կանգ չենք առնի նրանց վրա, քանի որ նրանց խաղը որոշ հետաքրքրութեան առարկայ լինել չէ կարող «Մշակի» բազմաթիւ ընթերցողների համար։ Խօսելով պիէսի մասին պէտք ասել, որ հասարակութեան մէջ առաջ էր բերում զուարթ քըրքիջ և ուշադիր վերաբերմունք։

Բայց այդ օրը առանձին հետաքրքրութեան առարկայ և երեկոյթի առանցքն էր կազմում մեր երիտասարդ տաղանդաւոր գրող Կարէն Միքայէլեանի «Կարմիր մեխակներ» 2 արարուածով դրամատիկական էտիւդը, որ խաղացվեց երկրորդ բաժնում սիրողների մասնակցութեամբ։

«Կարմիր մեխակներ» դրամատիկական էտիւդը պէտք գրաւէր մեր ուշադրութիւնը մի քանի տեսակէտով. նախ՝ որ նա առաջին անգամն էր բեմ հանվում և ապա այն՝ որ հէնց ինքը, շնորհալի հեղինակը, առաջին անգամն է փորձում իր երիտասարդական ոյժերը թատերական գրուածք տալու մէջ. Ինչպէս գիտեն ընթերցողները, Կարէն Միքայէլեանը իր երկու ժողովածուներում տուել է մի շարք արձակ պատմուածքներ։

Մենք շահեկան ենք գտնում, թէկուզ համառօտ, տալ «Կարմիր մեխակների» բովանդակութիւնը, քանի որ էտիւդը դեռ ոչ մի տեղ չէ տպագրված և միայն առաջին անգամն էր խաղացվում Մոսկվայում, մանաւանդ այն ջերմագին վերաբերմունքից յետոյ, որ ցոյց տուեց Մոսկվայի հայ հասարակութիւնը նոր դրամատուրգին խաղից յետոյ։

Հեռաւոր մեծ քաղաքի աղմկալից կեանքից իր հայրենի կիսալուսաւոր աւանն է վերադառնում Ռուբէնը 8 տարվայ անջատումից յետոյ։

Ութ երկար և ի՜նչպիսի տարիներ։

Իր կեանքի ամենառաջ և ամենասուրբական օրեր։

Տարիներ, լեցուն անվերջ եռանդի և վեհ ձգտումների անդուլ գործունէութեամբ։

Ուսանողական կեանքի այդ քաղցրիկ շրջանը։

Մի ժամանակաշրջան, երբ խառնած իր մէջ բազմաթիւ զգայուն ու ազնիւ հոգիներ, ուղղում էր նրանց բոլորին դէպի վեհ համամարդկային անվեհեր գործունէութիւն։

Ապրում էր Ռուբէնը այդ կեանքը իր ամբողջ էութեամբ, իր բոլոր խառնուածքով։

Ազատութեան ու կռւի մէջ նա գտնում էր փառք, բայց ոչ սնածին. Նա անվերապահ նուիրված էր ընդհանուր մեծ գործին։

Անցան այդ պաշտելի օրերը, բարձրացած մրրիկը տակն ու վրա արեց ամեն ինչ, կանգ առաւ շարժումը իր վախճանին չը հասած...

Կեանքը իր երկաթէ կամքով դրեց իր դրոշմը նաև Ռուբէնի վրա։

Փշրվեցին նրա յոյսերը, մթութեան երազները հանգիստ տուին նրան։

Թեւաբեկ արծիւը սարերի կատարներից իջաւ, իջաւ նա տանջված դալուկ, հայրենի սարերի բարձրութեան ու անծայր եթերին, բայց այդ գիտակից իր փոքրութեան, յուսաբեկ, նրա զոհող հոգին անհաշտ, դէթ թաղվել է ուզում իր մեծութիւնը տեսած ու իրան սրտով աչերից։

Սիրող մայրը անհուն կարօտով, այնտեղ, հայրենի տնակում, անհամբեր սպասում է նրան, և Ռուբէնը, այդ յուսաբեկ արծիւը, եկել է գէթ ժամանակաւորապէս կենդանացնելու գորովագութ մօրը։

Իսկ մայրը արդէն խրականացած է տեսնում իր փափագները։

Համալսարանն աւարտած Ռուբէնը շուտով սկսելու է իր բժշկական գործունէութիւնը, և որդու փայլուն ապագան այժմ լոյսով ու ջերմով լցնում է նրա չորացած երակները։

Ուրախ են և բարեկամները. յանձին Ռուբէնի նրանք տեսնում են նշանաւոր բժշկի, որ հայրենասիրական զգացմունքներով լցնում է նրանց հոգին և որ իր բժշկական անմիջական գործունէութեամբ հաղորդակից պիտի լինի նրանց հետ։

Ուրախ չէ միայն Ռուբէնը։

Եւ որքան ունայնութիւն ու սին յոյսեր նրա վրա։

Ցածախոհներից ստանալիք բուլիլները չեն, որ գրաւում են նրան։

Մեծ հովերին անձնատուր ու նրանցով սլացած՝ փախչել, փախչել է ուզում հայրենի աւանից, փախչել, թաղվել մեծ քաղաքի ժխորի մէջ, ուր ոչ ոք չի նկատի նրան։

Իսկ այստեղ հայրենիքում մեծ մարդ է նա, մեծ յոյսեր են դրված նրա վրա. մինչև իսկ քահանան կարօտում է նրա ազդեցիկ խօսքերին, քանդված զանգակատունը վերանորոգելու...

Իսկ հոգաբարձութիւնը։

Նա էլ առաջարկում է դպրոցի օգտին վիճակախաղի տոմսակներ ցրել գիւղացիների մէջ։

Իսկ վաղը... Վա՞ղն ինչ կառաջարկեն նրան...

Սակայն Ռուբէնի վերասլաց հոգին անկարող է կրել շրջապատողների անգիտակից հեգնանքները։

Սաւառնումների սովոր արծիւը անկարող է սողալ փորաքարշ։

Նա ընդմիշտ թողնել, հեռանալ է ուզում հայրենի աւանը։ Ի՜նչ հրապուրիչ է հայրենի բնութիւնը. և որքան յիշողութիւններ կապված նրա հետ։

Հրապուրիչ են թառի հնչիւնները, որոնց մէջ այնքան հեծեծանք ու վիշտ է լցված, և այդ հնչիւնների հետ նա փոխադրվում է իր մանկութեան օրերը՝ այնչափ սիրելի։

Նրա մօտն է իր մանկութեան սրտակից ընկեր Մարգարիտը, որն այժմ ամուսնացած՝ մայր է դարձել։

Նրանով յափշտակված է Մարգարիտի քոյր Գայեանէն, հեռաւոր ազգականուհին Ռուբէնի։

Նա՝ այդ գորովիկ ու անձնուէր աղջիկը ապրում է Ռուբէնի անցեալ գործունէութեամբ, Ռուբէնի ջերմ երկրպագուն է նա... Նրա կուսական անարատ սրտում սիրոյ և մեծարանքի խոյանքները ծլել-արձակում...

Ռուբէնի տարիներ առաջ տպագրած յօդուածները մի առ մի հաւաքած արդէն դեղնած լրագիրներից, նա մի տետրակ է կազմել և որպէս անգին իր պահում է սրբութեամբ, տոգորված նրանցով։

Առանձին խանդավառութեամբ յիշում է այն ժողովները, որոնք տեղի էին ունենում Ռուբէնի մօտ ընկերների հետ նրա ուսանող եղած ժամանակ. Այդ ժամանակ Գայեանէն շատ էր փոքր, անսկատելի...

Եւ այժմ, հետևելով Ռուբէնի անցեալ ձգտումներին, նա, չգտնելով հայրենակիցներին օգտակար լինելու տենչով, օրն ի բուն նուիրված է՝ կրթելով նրանց զաւակներին ձրիաբար, գտնելով դրա մէջ երջանկութիւն և տանելով աշխատանքը ժրաջան մեղուի պէս։

Ռուբէնը հմայել, դիւթել է կանացի գեղատենչ հոգին։

Նա այժմ աւելի հմայքով է նայում Ռուբէնին, և նրա դեռ անհոգ կրծքից տանջանքի ճիչեր են հնչում Ռուբէնի երթալուն հետ։

Հեռանում է Ռուբէնը, այդ կարծեցեալ բժիշկը, որ ութ տարիների ընթացքում բժշկական ֆակուլտէտն աւարտելու փորձեր անգամ չէ արել իր փայլուն ընդունակութեամբ... Նրան յանդիմանում է Սիրանոյշը։

Ռուբէնին չեն կարող հասկանալ նրանք։ Բայց նա անկարող է պահել իր մէջ կեղծիքը. նա պատաւոր է ճշմարտութիւնը ասել, որ, ինքը, այո, բժիշկ չէ, նպատակ անգամ չունի հաստատվելու այնտեղ, և մի երկու օր չի կարող ապրել այդ ծանր մթնոլորտում։ Ու նա անյայտութեան մէջ մնալ ու թագստի վայրեր որոնել է անտէրում։ Թողնել հայրենի աւանը անդարձ ու յաւէտ, ուրկից հալածում է նրան չորեքմի Արաքսիաւ, այն հողաթումբը նուիրական, որ կցել է իր տակ առաջին անարատ սէրը Ռուբէնի և հոգու սլացումները նրա։

Չը կայ Արաքսին, որը հետ իր սուրբ զգացումներով ապրում է Ռուբէնը։

Ժառանգական անբուժելի հիւանդութիւնը գերեզման իջեցրեց պաշտելի էակին, որին սիրել է Ռուբէնը լուռ, ջերմագին... որի հետ նա թէև չի ունեցել սիրոյ ոչ մի բացատրութիւն, բայց նրանց սրտերը ներքուստ հաղորդակից եղել, զուգորդվել են անքակտելի կապերով, սիրել և յուզվել փոխադարձ...

Եւ մահվան գիշատիչ ճանկերում անգամ երջանիկ է Արաքսին, սիրեցեալ Ռուբէնի անունը մրմնջալիս...

Չը կայ այլ ևս Արաքսին՝ բուռն ու անդըրանիկ սէրը Ռուբէնի։

Ամեն օր նա այցելում է հողաթումբը կոյսի, կարմիր մեխակներ փռում նրա վրա։

«Կարմիր մեխակներ...»

«Ազատութեան ու կռւի խորհրդանշան», որոնց ծանրութիւնը զգալու է դաղաղի մէջ անկենդան Արաքսին, որոնց հոտը լսելով հանգիստ պիտի ննջի նա, որ նրա Ռուբէնը չի փոխվել և իր անցեալին նա չի դաւաճանել...

Ո՜վ վեհագոյն ու ճշմարիտ աւանդ... որ կապում է Ռուբէնի անցեալը ապագայի հետ։

Ահա վերջին կամքը յաւիտենականութեան գիրկն անցնող սիրահար կոյսին, որի աւանդը սրբութեամբ հաղորդում է Ռուբէնին մտերիմ Սիրանոյշը։

Եւ դառնագին թող սգայ Ռուբէնը իր վհատծին կեանքն ու սէրը վաղանցուկ... և երթայ ձուլվելու աղմկայոյզ քաղաքի մեծ ժխորի մէջ։

Եւ հասկանում է նրա փախուստը Գայեանէն.

— Ոստիկանութիւնը հետապնդում, հալածում է Ռուբէնին, իբրև գործչի։

Ո՜վ անսպառ հաւատ։

— Այդ էլ հաւատի խնդիր է, Գայեակ ջան, հաւատա, մարդուս նախ և առաջ հաւատ է հարկաւոր...

Դրսում կառքն է դղրդում, հեռացող զանգերի հնչիւնները մեղմանում ու մարում են ընդ միշտ...

Գ. Հայկունի

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Օ պ է ր ա

Կիրակի, փետրվարի 9-ին, տեղի ունեցաւ օպէրային խմբի համակրելի գիրեժեօրներից մէկի՝ գերմանացի երիտասարդ Բորիս Գեսսի բենեֆիսը։

Ամբողջ սէզօնի ընթացքում ով հետևել է Գեսսի դիրիժեօրական գործունէութեան, նա նկատած կը լինի, որ նրա մէջ առկայծում է խոշոր ապագայ խոստացող հմուտ երաժշտագէտի տաղանդը։ Գեսս ստացած ունի համալսարանական բարձր կրթութիւն Ռուսաստանում և միաժամանակ հիմնաւորապէս ուսումնասիրած և իւրացրած ունի երաժշտական արուեստը, որին և ներկայումս ամբողջապէս նուիրվել է ինքը։

Իր բենեֆիսի համար Գեսս դրել էր Ռախմանինովի «Ալէկօ» և Զայկօվսկիի «Իօլանտա» օպէրաները մի-մի գործողութեամբ, նոյնպէս և Զայկօվսկիի երաժշտագրած «Ռոմէօ» խորագրով յետ-մահվան լոյս ընծայված մի դուէտը, որ ներկայացնում է Ռոմէօյի և Ջիւլէտտայի հանդիպման մի փոքր տեսարանը։

Ցիշեալ երեք ստեղծագործութիւններն էլ, մանաւանդ «Իօլանտան», պարունակում են թէ օրկէստրովկայի և թէ պարտիտուրայի կողմից բարդ և վերին աստիճանի ախորժալուր երաժշտութիւն՝ լի քնարերգական մելօդիաներով։

Մեծ հմտութեամբ ղեկավարելով թէ օրկէստրային և թէ երգեցիկ խմբերին ու պարտիաները կատարողներին՝ Գեսս արժանացաւ բուռն ծափահարութիւնների և բազմաթիւ թանգարժէք ընծաների։

Այդ երեկոյ մասնակցում էին օպէրային խմբի առաջնակարգ արտիստները՝ տ. տ. Ալէշկօ, Սաբանէեվա, պ. պ. Լազարեվ, Շվէց, Դիմիտրիէվ, Կուրզնէր, Սարաջեվ, Օլխովսկի, Դէմիդով և ուրիշներ, որոնք մեծ ոգևորութեամբ կատարեցին իրանց ստանձնած պարտիաները։

Թատրոնը ամբողջապէս լիքն էր հասարակութեամբ։

X.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 10 փետրվարի

Ես, Երզրումի վիլայէթի Խնուս քաղաքացի Յովհաննէս Բաղէեանս, ահա քանի օր է գտնվում եմ Թիֆլիսում անել դրութեան մէջ, որովհետև ցանկանում եմ գնալ իմ հայրենիք՝ Խնուս, բայց ճանապարհածախս չունեմ։

Նախ աշխատեցի ժամանակաւոր որևէ պարապմունք գտնել և այդպէս հայթայթել անհրաժեշտ ճանապարհածախսս, որ չէ անցնում 10 րուբլուց, բայց այդ չաջողվեց ինձ, որովհետև ես դեռ նոր եմ եկած Թիֆլիս և անծանօթ եմ այստեղ թէ մարդկանց և թէ քաղաքին։

Մի քանի հայրենակիցներ ինձ խորհուրդ տուին դիմել Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին, յայտնելով որ սրա տրամադրութեան տակ գտնվում է յօգուտ Թիւրքահայ գաղթականների մի յայտնի գումար։ Ես դիմեցի լի յոյսով, բայց ինձ կոպիտ կերպով մերժեցին։ Դիմեցի նոյնպէս Թիֆլիսի առաջնորդին, խնդրելով ինձ որևէ կերպով ճանապարհել դէպի հայրենիքս, բայց դարձեալ մերժում ստացայ։

Արդ՝ մնալով Թիֆլիսում անտուն, անօթեան և բառի բնական առումով սոված և ցանկանալով անպատճառ հայրենիք վերադառնալ, սրանով խնդրում եմ բարի մարդկանց մի բուպէ պատկերացնել իմ դրութիւնս իրանց առաջ և օգնել ինձ՝ հայրենիք վերադառնալու իմ շատ բնական ձըգտումս իրագործելու։

նակ էնէրգիա և առատ քրտինք է խլում նրանից։ Եւ մինչ, այդքան միայն։ Իր աշխատանքի արդիւնքը իր սեփականութիւնը չէ. Նա ստանում է նրա մի մասը միայն, մինչդեռ միւս մասը ուրիշին է բաժին ընկնում, այդ բաժնով ուրիշները պալատներ են կառուցանում, իրանց համար կոմֆորտ ու ճոխութիւն ստեղծում, էլեքտրական լոյսերի մէջ լողում։

Այս երևոյթի գիտակցութիւնը բաւական է, որպէսզի աշխատանքի ծանր ձեն ու շահագործման ակնյայտնի փաստը բաբելոնեան գերութիւն համարվի և հիւծված, տանջված բանւորի բերնից անէծքի դառն շեշտեր լսվեն։ «Անիծված լինի նա՝ ով այս կեանքում մեզ ստրուկներ դարձրեց», ասում է բանաստեղծներից շնորհալին՝ Սամօբիտնիկը, որը «Правда» լրագրի աշխատակիցն է եղել միևնոյն ժամանակ։

Այդ հնոցավառը նկարագրում է իր ծանր կացութիւնը բոցավառ հնոցի առջև, որի «տաքութիւնը անտանելի է... աշխատանքը աւելի ծանր, քան տանջանքը... աւելի լաւ է ստանալ իր հաշիւն ու հեռանալ, հօ մարդ է նա և ոչ սատանայ», որ դժոխքին սովոր լինի։

Մի այլ տեղ հանքագործն է լալիս իր ճակատագիրը(?), որի աշխատանքը ստորերկրեայ խաւարում է կատարվում, որտեղ բանւորի կեանքը մազի թելից է կախված. բաւական է ստորերկրեայ գազերի մի պայթիւն կամ պատուածքից ժայթքող մի հեղեղ, որպէսզի աշխատաւորի կեանքը մի վայրկեանում խաւարի։

Երկրի խորքից դչլատում ենք դանձեր անբաւ ու անգին,
Վայելք, ծիծաղ, պերճանք մենք ենք բերում հանքի տէրերին։
Մինչդեռ քաղցի սարսափով են մեր ընտանիք համակվում,
Նեխված օդը մեր կուրծքը սեղմում, թունաւորում մեր հոգուն,
Իսկ հանքերը լող են տալիս մեր արիւն ու քրտինքում...

Այսպէս է ահա յօրինում հանքագործը իր տխուր երգը, որի մէջ և՛ նրա տառապանքի ձայնն է լսվում և՛ այն գիտակցութիւնը, թէ ուրիշների վայելքի և ցնծութեան աղբիւրը ստորերկրեայ խաւարումը կատարած իր ծանր աշխատանքն է։

Ոտանաւոր գրողների մէջ կան նոյնիսկ էլեքտրաքարշի վրա ծառայողներ, որոնց վիճակը անմխիթար լինելով, նրանց ստանաւորների մէջ դառնատ նոյն դառն շեշտերն են լսվում։

Վառարան շինողներից (печникъ) մէկը, Մալցեվ անունով, գրել է մի ոտանաւոր, որտեղ ցոյց է տալիս, թէ ինչպէս են այդ բանւոր-արհեստաւորներին շահագործում նրանց կապալառուները և թէ ծանր, յոգնեցուցիչ աշխատանքից յետոյ որպիսի՜ անտանելի պայմաններում են ապրում նրանք, քամելով կեանքի դառն մրուրը։

Բայց բանւորի կեանքում, նրա ամբողջ պսիխիկայի վրա առաջին դեր խաղացողը մեքենան է։ Միապաղաղ, միաձև աշխատանքը մեքենայի շուրջը՝ մեքենայ է դարձնում նաև մարդուն, բթացնում է նրա ուղեղը։ Բայց այդ՝ մի վայրկեան դադար չունեցող մեքենան շատ մեծ ճշգապահութեան խնամելով, լարված աշխատանք է պահանջում բանւորից։

Սուրխաթեան

Օգնել ցանկացողները կարող են իրանց լուման ուղարկել «Մշակի» խմբագրութեան անունով։

Խնուսցի Յովհ. Բաղէեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Օսմ. մէբուսական ընտրութիւններ

Կ. Պօլիս, 23 յունվար

Օսմ. մէբուսական ընտրութիւնները աւարտուելու վրայ են։ Թիւրքիոյ գրեթէ ամէն մասերուն մէջ աւարտեցան նախապատրաստական գործողութիւնները, գրեթէ մեծ մասին մէջ ընտրուեցան Բ. կարգի ընտրողները, և մէկ փոքր մասին մէջ ալ վերջնապէս ընտրուեցան երեսփոխանները, և դեռ մեր պատրիարքարանը՝ շնորհիւ Գաբայեան վարչութեան ապիկարութեան՝ չը կրցաւ նոյնիսկ որոշել, թէ պէտք է մասնակցի ընտրութեանց թէ՞ չէ։

Ամէն շաբթու նիստ կը գումարէ խառն ժողովը, նոյնիսկ շաբաթը երկու անգամ, և ամէն անգամ ալ կատարեալ կանոնաւորութեամբ կը յայտարարուի, թէ կարելի չեղաւ որոշում մը տալ։

Արդէն անկէ առաջ այս խնդրոյն վերաբերեալ տեղեկութիւններ տուի, որոնց կըրկին չեմ ուզեր անդրադառնալ, սակայն մի քանի կէտեր կան, որոնք ի վեր առնել անհրաժեշտ կը դատեմ, գործը ամբողջովին պատկերացնելու համար։

Ընտրութեանց մասնակցութեան գործին մէջ ազգը վերստին դաշնակցականաց դաւաճանութեան զոհ գնաց։ Դարձեալ անոնք իրենց կուռքն էր, որ առաջ անցուցին, ի վնաս ազգին և ի շահ իրենց։ Վարչութեան գլխաւոր ու աններելի ապիկարութիւնն այն եղաւ, որ ազգային վարչութեան մը հանգամանքը մերկանալով ստանձնեց Դաշնակցութիւն կուսակցութեան վարչութիւնը ըլլալու դերը, ինչ որ իր դերը ըլլալու չէր։

Վարչութիւնը գործիք եղաւ, վասնզի վարչութեան անդամներուն մեծամասնութիւնը, ըլլալով թեկնածու մէբուսութեան, կարծեց, թէ Դաշնակցութեան շահերուն ծառայելով պիտի կարենար իրեն համար աթոռ ապահովել մէբուսարանին մէջ։

Եւ Դաշնակցութիւնը այդ խայծը նետելով յաջողեցաւ ուրեմն իր խաղին մէջ և երրորդ անգամ ըլլալով ազգը դարձեալ ծուղակի բերաւ։

Նախորդ ընտրութեան մէջ (1912) ամէն ոք գիտէ, թէ Դաշնակցութիւնը ինքնագլուխ, առանց ազգային վարչութեան խորհուրդ հարցնելու, նոյն իսկ առանց բանակցելու միւս կուսակցութեանց հետ, գնաց համաձայնեցաւ Իթթիհատին հետ, իբր թէ ի փոխարէն բազմաթիւ հաւաստիքներու ընծայել խոստանալով իր... աջակցութիւնը Իթթիհատին։

Այն ատեն, շատ լաւ կը յիշեմ, պ. Վռամեան իր ձայնին բոլոր ոյժովը և թոքերուն բոլոր զօրութեամբը բարկաճայթ կը պոռար, թէ պատրիարքարանը չէր կըրնար միջամտել ընտրական գործին, ատիկա քաղաքական կուսակցութեանց իրաւունքն էր, թէ ազգ. ժողովը և անկէ բղխած վարչութիւնը օրէնքով նշանակուած եկեղեցական և կրթական խնդիրները միայն լուծելու իրաւասու էին։ Պ. Վռամեանի այս տեսութիւններուն ոյժ կուտային այն ատեն պ. պ. Զարդարեան, Շահրիկեան և այլ համատեղութիւնները Դաշնակցութեան։

Այն ատեն գիտէք, թէ ինչ եղաւ արդիւնքը այդ ընտրութեանց։

Իթթիհատը խաբեց Դաշնակցութիւնը, որ ամօթապարտ եղաւ ազգին առջև, վասնզի ոչ միայն Դաշնակցութեան ձեռք բերել կարծած առաւելութեանց նշոյլն իսկ չըմնաց, այլ նոյն իսկ այդ արդիւնքներուն ամենէն շօշափելին և ամենէն անմիջականը՝ հայ մէբուսներու թիւը, փոխանակ աւելնալու, պակսեցաւ։

Հիմա, նոր ընտրութիւններու սկսուած պահուն, Դաշնակցութիւնը դարձեալ պատրաստուած էր երկու բանի համար աշխատել.

ա) Հասկցնել Իթթիհատին, թէ հայ ազգին մէջ իր կամքը գերիշխան է.

բ) Աւելի մէբուսական աթոռներ ապահովել, մի քանի դաշնակցականի գործ հայթայթելու համար։

Սակայն ուղղակի բանակցութեան համար յարդարուած գետին մը չկար, այլ նոյն իսկ արգելք, վասն զի նախորդ յուսախաբութենէն և ամօթալի նուաստութենէն յետոյ՝ դժուար էր կրկին մօտենալ, ուստի պէտք էր միջնորդ հաստատութիւն մը, որ մեր պատրիարքարանը եղաւ։

Ասոնք ազգ. վարչութեան միջոցաւ դրին կարգ մը պահանջներ, ինչպէս ա) համեմատական թիւ մէբուսներու, բ) հայ մէբուսներու հայ ազգին կողմէ ընտրութիւնը և այլն։

Համեմատական թիւ կը պահանջուէր աթոռներու թիւը շատցնելու համար, իսկ հայ մէբուսներու հայ ազգին կողմէ ընտրութիւնը կը պահանջուէր, վասն զի այս անգամ Իթթիհատին կողմէ իրենց ընտրութեան աշխատելու ոևէ հաւանականութիւն չկար։

Այս առաջարկները Թիւրք կառավարութեան համար կարելի չէր որ ընդունուէին, վասն զի այս սկզբունքներուն կիրառութիւնը վախճանն ու վերջն էր Թիւրք տիրապետութեան և սկիզբը արաբական նոր պետութեան մը։

Դաշնակցականներն ալ ասիկա աղէկ գիտէին, սակայն պատրիարքարանը իրենցմէ աւելի խստապահանջ ցոյց տալով՝ կուզէին այս անգամ իբր հաշտարար սպրդիլ մէջտեղ և Բ. Դրան ու պատրիարքարանին անհամաձայնութիւնը իբր թէ յարդարել։

Այս կերպով Բ. Դրան պիտի ներշնչէին սա հաւատքը, թէ առանց դաշնակցականաց գործակցութեան՝ հայոց հետ գործել կարելի չէր։

Միւս կողմէ՝ կը յուսային վերստին հարկադրել գէթ դաշնակցական կարգ մը երեսփոխաններու ընտրութիւնը։

Սակայն Իթթիհատը, այս անգամ աւելի զօրաւոր և աւելի յանդուգն, վճռաբար մերժեց պատրիարքարանի առաջարկներն, իբր անկարելի, և միայն թուական մասին և պատրիարքարանի ընտրելիները յաջողցնելու համար կէս-խոստումներ տալով բաւականացաւ։

Դաշնակցականները, որոնք շատ լաւ գիտէին այդ խոստումներուն արժէքը, ապահովութիւններ ուզեցին, և պատրիարքարանը իր բանակցութիւնները խզեց Բ. Դրան հետ։

Սակայն դաշնակցականները դեռ չէին յուսահատած, և իրենցմէ ոմանք դեռ յամառօրէն և առանց յուսահատելու շարունակ կերթեւեկէին Բ. Դուռ, մանաւանդ Թալէաթին քով, կերպով մը միջնորդի դեր ստանձնելու համար։

Իթթիհատը, այս անգամ կատարելապէս երես դարձուցած դաշնակցականներէն, աւելի սաստկութեամբ կը յամառի։

Բ. Դրան դիրքը մանաւանդ ամրացաւ այն ատեն, երբ յոյներուն մի քանի չնչին պահանջներուն գոհացում տալով ապահովեց անոնց մասնակցութիւնը և զմեզ բոլորովին առանձին թողուց թիւրքերու հետ։

Հիմա դաշնակցականները՝ պատրիարքարանի կողմէ անուղղակի կերպով եղած ձեռնպահութեան հրաւէրին դէմ խօսողները և գործողները դաւաճան կը հռչակեն։

Կերևայ թէ այս մարդիկը շատ կարճ յիշողութիւն մը ունին։ Կը մոռնան, թէ երբեմն իրենք էին, որ կուրանային պատրիարքարանի հեղինակութիւնը և անոր հրահանգով շարժիլն այն ատեն կը համարէին դաւաճանութիւն։ Այսօր անոր հակառակն է որ կը փաստաբանեն։ Արդեօք ա՞յն ատեն կը սխալէին թէ այսօր։

Մեր կարծիքով՝ շատ պարզ է, թէ այն ատեն կը դաւաճանէին ազգին դէմ, և այսօր այդ դաւաճանութեան, պատրիարքարանի հեղինակութիւնը չքացնելու և ջնջելու դաւաճանութեան, ուղղակի արդիւնքն է, որ կը քաղեն պ. պ. Զարդարեան, Վռամեան, Փափազեան, Վարդգէս, Շահրիկեան և այլն։

Այսօր Իթթիհատը՝ նախընթաց փորձառութեան մը վրայ հիմնուած՝ իր յոյսը դրած է ազգին հատուածներուն և անոր կուսակցութիւններուն վրայ, և թերևս նոյն ինքն Դաշնակցութեան վրայ, որ յոյս ունի գուցէ վերջին պահուն համաձայնութեան բերել։

Վարչութիւնը, տեսնելով հանդերձ թէ բոլորովին առանձին մնացինք, տեսնելով հանդերձ թէ ուրիշներ իր կռնակէն կը սակարկեն կառավարութեան հետ, քաջութիւնը չունեցաւ ըսելու, թէ ինքն ազգին շահերուն համաձայն իր գործելու անկախութիւնը կը պահէ։

Այսօր, հայ-բողոքական և հայ-կաթոլիկ յարանուանութիւնները պաշտօնապէս մասնակցելու որոշում տալէն յետոյ և բաժնուելէն յետոյ մեզմէ, վարչութիւնը կը պնդէ ու կը յամառի իր նախորդ որոշման վրայ և կը մնայ ձեռնպահ։

Դաշնակցականներն ու վարչութիւնը կուզեն խաբել ազգը, ըսելով թէ մէբուսական ընտրութեանց մասնակցելով հայկական խնդիրը պիտի վժժի, երբ թէ Եւրոպա մեծ կշիռ մը տուած ըլլայ հայոց ընտրութեանց մասնակցելուն։

Ասիկա սուտ է։ Ընդհակառակը, այս տեսակ շարժում մը և ոչ մէկ օգուտ ունի և, ընդհակառակը, դէմ է այն ծրագրին, որ բարենորոգմանց հարցը յուզուած ատեն ընդգրուած էր։

Թիւրքերը ընդհակառակը ի չարն մեկնեցին և այս երկու խնդիրները իրարու միացուցին։

Մինչև հիմա Թիւրքահայք կը յայտարարէին, թէ մենք ոևէ մասնակցութիւն չունինք արտասահմանի հայոց յարուցած խնդրոյն, և թէ Էջմիածնի Կաթողիկոսն է, որ խնդրամատոյց եղած է ռուս կառավարութեան։

Մէբուսական ընտրութեանց չմասնակցելով՝ Թիւրքերուն կասկած ներշնչեցինք, թէ դիտմամբ չենք մասնակցիր, որ օտար երկրի մէջ հայոց յարուցած բողոքներուն այս կերպով ուժ տանք։

Եւ ասոր փոխադարձութիւն մը ըլլալու համար ահա կառավարութիւնը կազմակերպեց հայոց դէմ կանոնաւոր հալածանք մը։

Ասկէ առաջ, հայկական խնդրոյն ստացած վերջին երևոյթներու առջև Թիւրքահայերու կողմէ ալ բողոքի մեծ ցոյցերու տեղի չտալու համար, կառավարութիւնը վերջին ամիսներուն մէջ աշխատեցաւ Հայաստանի մէջ գործող աւազակները զսպել և պատրիարքարանի մէկ քանի կարևոր պահանջներուն—որոնք տարիներէ ի վեր ձգձգուած էին—գոհացում տալ և սիրաշահիլ։

Հիմա, որ ձգտում առաջ եկաւ, ոչ միայն պատրիարքարանի բոլոր պահանջները ոչ միայն կանտեսուին և կը մերժուին, այլ նոյն իսկ յայտնի հակառակութիւն մը կայ հայոց դէմ։

Գաւառներէն կը հասնին տխուր լուրեր, հայոց դէմ բացուած բոյկոտի մասին։

Հօս նոյն իսկ հիւանդանոցին յատկացած պետական նպաստը, որ պատերազմին բովանդակ տևողութեան և աւելի անձուկ օրերու մէջ կառավարութիւնը տալ չէր զլացած, դադրած է։

Եդի-Կուլէի ազգապատկան մեծարժէք ագարակին, ինչպէս նաև Ղալաթիոյ Խասթախանէ խանի խնդիրները, որ մեծ կարևորութիւն ունին, կարգադրուելու վրայ էին և ազգը պիտի տիրանար այդ գրաւեալ կալուածներուն, սակայն կառավարութիւնը այդ գործերը ոչ միայն սակաւ ձըգած է, այլև ուրիշ կարգ մը ազգային կալուածներ գրաւել կուտայ իբր անտէր։ Եւ երբ ասոնց համար կառավարութեան դիմում կըլլայ, առանց վարանելու կըսուի, թէ «Մէբուսական ընտրութեանց մասնակցեցէք, և պիտի կարգադրուին»։

Հետևաբար, բացորոշ է, թէ Թիւրք տարրը գրգռուած է հայոց դէմ, և այս գրգռութեան հետևանքը ուղղակի պիտի կրէ ազգը։

Հիմա հարց է, թէ կարժէ՞ր, որ այս ձգտումը ստեղծուէր, ու այս հակառակութիւնը առաջ գար, երբ արդէն մեր անուանով օտար ճնշում մը կուգար նեղել կառավարութիւնը, որ հարկադրուած տեղի պիտի տար։ Մեր ընտրութեանց մասնակցիլը ոևէ կշիռ չէր կրնար ունենալ և բնաւ եւրոպական պետութիւն մը չէր կրնար հետևցնել, թէ հայերը Թիւրք վարչութենէն գոհ ըլլալնուն համար է, որ այս ընտրութեանց կը մասնակցին։

Արդէն վարչութեան կողմէ ալ եղած ամենաստիպողական հրաւէր մը ընտրութեանց մասնակցելու համար չէր կրնար ոևէ եռանդ առաջ բերել, քանի որ ժողովուրդը սաստիկ պաղած է Թիւրք սահմանադրութենէն և անկէ ոևէ յոյս չունի։ Իսկ Իթթիհատին պնակալէզները հիմա ալ կը մասնակցին, հակառակ վարչութեան արգելքին։

Հետևաբար բացարձակապէս անվարչագիտական ու դատապարտելի ուղղութիւն մըն էր վարչութեան ընթացքը, և իսկապէս պատասխանատուութիւն հրաւիրող։

Շառայլ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Новое Время»-ում Ստոլիպինը նախազգուշացնում է, որ Գերմանիան պատերազմի է պատրաստվում։ Յօդուածագրի ասելով, Գերմանիան սկզբում յարձակվելու է Ֆրանսիայի վրա, որին կը ջարդէ և, ազատվելով սպառնալիքներից, արշաւելու է դէպի Ռուսաստան։

◆ Իտալիան լիակատար բաւարարութիւն ստացաւ Թիւրքիայից Փոքր-Ասիայում երկաթուղիներ կառուցանելու վերաբերութեամբ, որի փոխարէն նա վերադարձնելու է գրաւած կղզիները։

◆ Կ. Պօլսից վերջին հեռագիրը յայտնում է, որ Բ. Դուռը, անտես անելով մեծ պետութիւններին, աշխատում է անմիջական բանակցութիւններով Յունաստանի հետ հարթել Եգէյեան կղզիների հարցը։ Այդ առիթով մեծ վէզիրը այցելեց յունաց դեսպանին։ Շատ հաւանական է, որ յունաց պրեմիէր Վենիզելոսը այցելէ Կ. Պօլիս։

◆ Անգլիայի վերաբերմունքը դէպի Իտալիան ստանում է սառը կերպարանք նրանից յետոյ, երբ Իտալիան կարող եղաւ ձեռք ձգել երկաթուղային կօնցէսիաներ Փոքր-Ասիայում։ Առանձնապէս անգլիական կառավարութեանը մեծ դժգոհութիւն է պատճառում Զմիւռնիա-Աղայլին երկաթուղու կառուցման կօնցէսիան, որովհետև երկաթուղին տրամագծօրէն հակառակ է անգլիական շահերին։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ գերմանական զինուորական միսսիան հանդիպեց լիակատար անյաջողութեան և պատրաստվում է մեկնել Թիւրքիայից։

◆ Բոլոր աւստրիական զինուորական դպրոցներում դասաւանդվում է ալբանական լեզուն։

◆ Յունիսի սկզբին գերմանական կայսրը այցելելու է աւստրիական կայսր Ֆրանց-Յօզէֆին։

◆ Բեռլինում մեծ յուզմունք են առաջ բերել Ռուսաստանի և Ֆրանսիայի սպառազինման լուրերը։ Լրագիրները գրում են. «Յարձակումը մեր դէմ վճռված է»։

◆ Տօկիօյում կաբինետի դէմ ցոյցի միտինգները շարունակվում են։ Մի մեծ միտինգում հռետորները պրեմիէրին անուանեցին ոճրագործ, գողերի և մութ անձնաւորութիւնների ընկերակից։ Վճռված է պրեմիէրին և կալանաւորված օֆիցէրներին դանակներ ուղարկել խարակիրիի համար։

◆ Ալբանիայում սպասվում է ապստամբութիւն։

◆ Եւրոպացի մի բժիշկ գտել է հակայօդացաւի շիճուկ։

◆ Պարսկաստանում հակասահմանադրական շարժումը մուշտէիդների պրօպագանդայի շնորհիւ ստանում է ընդարձակ չափեր։

◆ Մօտիկ ապագայում կոմս Բերխտօլդը քաղաքական հարցերի քննութեան համար տեսակցութիւն է ունենալու Սան-Ջուլիանօյի հետ։

◆ Պարիզում առաջին անգամ Պուանկարէի մօտ տեղի ունեցած պարահանդէսին ներկայ էին աւելի քան 5000 հրաւիրվածներ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ. հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: **Պօստաւոր գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.: Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—**Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.: **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստաւոր գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրապօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրապօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.: **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրապօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.:

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.: **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.:

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ 38 ր. առ.:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հիւ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—18

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրոտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՏՕՄԱՍՕԼ
ԱՏԱՄԻ ԿՐԷՄ
Ատամները պահում է առողջ, ամուր և սպիտակ դրութեան մէջ։
Գինը 35 կոպ.
ՍՏՕՄԱՍՕԼ ԸՆԿ.
ՍՏՕԿՀՕԼՄՈՒՄ.
Պահեստը Կովկասեան Ընկ. Դեղային Ապրանքների խանութում։
(M. 50490) 8—1

Թիֆլիսի ՋՐԿԻՆԵԱՆՑ եկեղեցում փութով հարկաւոր է, ինձ համար, մի հմուտ և ձայնեղ
ՏԻՐԱՑՈՒ
ամսական 15 ր. ռոճիկով և ժողովրդական լաւ հասոյթով։ (Մի շաբաթվայ փորձով)։
Գրիգորիս ա.-ք. Երզնկեանց
124. 2—1

Լոյս են տեսել և վաճառվում են
ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ
հետևեալ աշխատութիւնները.
1) Bilder ans Türkisch-Armenien. A. Aharonian. Übersetzt und heranrgegehen von A. Smbatjanz. 1910 թ. 50 կոպ.։
2) «Ամենագեղեցիկ բանը կեանքում», Հ. Դրիւմմօնդի, գերմ. թարգմ., 1911 թ. գ. 15 կոպ.։
3) «Յոյն արևելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտութիւնը իր ծաղկման շրջանում (IV—V դար)», Ն. Սագարդայի, թարգմ. ռուս., 1911 թ., 15 կ.։
4) «Եկեղեցու պատմութիւնը տիեզերական ժողովների շրջանում», Վ. Բօլօտովի, թարգմ. ռուս., 1914 թ., գ. 50 կոպէկ։
Դիմել Էջմիածին Արտակ վարդապետին կամ «Գիր» և «Գուտտենբերգ» գրախանութներին Թիֆլիսում։
(օ. մ.) 105. 3—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ“



Անեկդոտների և սրախօսութիւնների ու Մօլլա Նասրէդդինի ընտիր առակների ժողովածու։ Գրքի երեսին այս նկարը մեծ դիրքով։ Գինն է 20 կոպ.։ Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին և կազմողին՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. А. Г. Есаянцу. Գրքի գինը և ճանապարհի ծախսը 9 կոպ. Գումարով ուզողնե մարկաներով ուղարկել առաջուց։ Գումարով ուզողներին 100 հատը կէս գնով, այսինքն 50% զեղչ. 50 հատին 40% զեղչ. 25 հատին 30% զեղչ։ Ճանապարհածախսը գնողի վրա։ Գումարով ուզողները պէտք է ղրկեն կանխավճար, մնացեալը վերադիր վճարով։
(օ.մ.) 29. 20—12

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
հրաւիրում է ցանկացողներին ստանձնել 1) քաղաքային նոր սպանդանոցի անասունների համար կեր (խոտ, յարդ, եգիպտացորեն և այլն) ծախելու և 2) գնելու և ծախելու նոյն սպանդանոցի Ֆրէյլանկում գտնվող հնացած միսը, որը կը տրվի ֆօնտը 5 կոպէկով։
Մանրամասնութիւնները կարելի է իմանալ հին սպանդանոցի գրասենեակում։ Ցանկացողները յայտարարութիւնները կարող են ներկայացնել նոյն տեղը կամ թէ Քաղաքային Ուպրավային փետրվարի 12-ին։
120. 2—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ (ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ) ԵՒ ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ
ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
փոխադրվեցին աւելի յարմար և ընդարձակ նոր բնակարան՝ Միխայլովսկի պր. վրա, տուն Ճավճավաձէի № 36. Պարապմունքները կուրսերում՝ I գրուպպայի հետ—ցեր. ժամը 3-ից, II գրուպպայի հետ—երեկ. 7-ից։ Հրատարակված են դասագրքեր հաշւապահութիւն սովորելու համար։
118. 10—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
սրանով յայտարարում է, որ փետրվարի 19-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Ուպրավայի շինութեան մէջ նշանակված է աճուրդ Ջրմուղու համար բէտօննային ռեզերվուար կառուցելու՝ երկաթէ-բէտօննային ծածկոցով, 300,000 դոյլ ջրի պարունակութեամբ։
Աճուրդին մասնակցելու համար հարկաւոր է ներկայացնել ոչ պակաս քան 2500 ր. գրաւական։
Ուպրավան իրան է վերապահում իրաւունք չը հաստատել աճուրդը։
Ծրագիրը և նախահաշիւը կարելի է տեսնել Ուպրավայի Ջրմուղային դիւանատանը ցերեկվայ ժամը 2—3-ը։
121. 1—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный